

րապէս՝ չատ բարձր տուրք մը դնել անցող նաւերուն վրայ։ Բայց դեռ աւելի մեծ վտանգ մը կայ, մանաւանդ նկատմամբ Միացեալ Նահանգաց։ Ընկերութեան այս բաժնետոմսները՝ յայտնի է թէ հրապարակի վրայ պիտի վաճառուին, և շատ հաւանականաբար կրնայ հանդիպիլ, որ մինչդեռ Միացեալ Նահանգք այսպէս ուղղակի կերպով չահ ունին, գործոյն առաջնորդութիւնը Եւրոպական տէրութեան մը ձեռքն անցնին։ Պ. Շէրման այս խօսքերով Եգիպտոսի և Սուէզի ջրանցքին գործոց զիրքը կ'ուզէ նշանակել, գործ մը որոյ ուղղութիւնն դրամատանց մէջ ծախուեցաւ, և կ'ազդարարէ իր քաղաքակցաց որ արթնուն կենան, չըլլայ թէ այս մեծ և դժբաղդ սխալ մունքն իրենց ալ հանդիպի։

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԿԱԶՄԵՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

Լոյս տեսած է երրորդ Արտմը որ պարտնակում է իւր մէջ 20 մեծագիր լուսանկար պատկերներ վայոց ձորում գտնուածներից, իւրեանց անցեալ և ներկայ համոռօտ ծանօթութեամբ, աւելի հարուստ և ճոխ է քան առաջին և երկրորդ Արտմը։ գինը ճանապարհածախսով 10 րուբ. կազմածին. իսկ անկազմը 50 կոպ. պակաս. ստանալ ցանկացողները թէ առաջին թէ երկրորդ և թէ երրորդ Արտմների համար գիմում են Administration de l'Imprimerie d'Etchmiadzine կամ ուղղակի կազմողին՝ վաղարշապատ լուսանկար Մ. Փափազեանց։

Վաճառվում է

Նաև լուսանկար Մ. Փափազեանի կազմած Հին և նոր Կտակարանի լուսանկար պատկերներ նուրբ և մաքուր, թուով 40 հատ — սորա բաժանուած են երկու մասի, իւրաքանչիւր մաս 20 հատական, մէն մի մաս ձեռակազմ լինելով, գինը 6 րուբ. ճանապարհածախսով, ցանկացողները գիմում են վաղարշապատ լուսանկար Մ. Փափազեանցին։

